Cashback-ի տրամադրման պայմաններ և դրույթներ

1. Հիմնական հասկացություններ

Ակցիա - «Էվոկաբանկ» ԲԲԸ-ի կողմից իրականացվող միջոցառում,
Բանկ - «Էվոկաբանկ» ԲԲԸ,
Քարտապան - «Էվոկաբանկ» ԲԲԸ-ում «Mastercard» վճարային քարտի թողարկման և սպասարկման համար պայմանագիր կնքած ֆիզիկական անձ,
Վճարային համակարգ - Mastercard Inc,
Քարտ - Բանկի կողմից թողարկված «Mastercard» վճարային համակարգի քարտ, որը տրամադրվում է Քարտապանին,
Cashback կամ Քեշբեք - Գումարի որոշակի տոկոսի վերադարձ գնում կատարելուց հետո:
Չեղչ - Քարտի սպասարկման վճարի նվազեցում՝ համեմատած սկզբնական սպասարկման վճարի հետ,
Վաճառքի կետ - Արտասահմանյան վաճառքի սպասարկման կետեր, որտեղ գործարք կատարելիս ձևավորվելու է **Cashback,**
Կանոններ - Ակցիային մասնակցելու պայմաններն ու դրույթները,
Chargeback - Վճարման վերադարձ, երբ Քարտապանը վիճարկում է գործարքը և Բանկը հետ է վերադարձնում գումարը,
Refund, reversal - Գումարի վերադարձ Քարտապանին՝ անավարտ կամ չեղարկված գործարքի դեպքում: Refund-ը իրականացվում է վաճառողի կողմից ապրանքը վերադարձնելուց հետո: Reversal-ի դեպքում գործարքը անմիջապես չեղարկվում է և գումար չի գանձվում:
Հաշվանցված գործարք - Հաստատված գործարք, որն արդեն հաշվառված է բանկային կամ վճարային համակարգում:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Ակցիան իրականացվում է Բանկի բոլոր «Mastercard» վճարային քարտերով,
2.2. Ակցիայի շրջանակում Քարտապանները, կատարելով անկանխիկ գործարքներ միջազգային առևտրային կետերում, ստանալու են քեշբեք 10 տոկոս՝ չներառելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը,
2.3. Յուրաքանչյուր Հաճախորդին Քեշբեք տրամադրվում է առավելագույնը 20,000 ՀՀ դրամ գումարի չափով,

2.4. Ակցիան գործում է 10.03.2026 թվականից մինչև 10.04.2026 թվականը:

3. Ակցիայի պայմաններ

3.1. Ակցիայի շրջանակում Քարտապանները Քեշբեք ստանալու համար պետք է վճարումներ կատարեն ՀՀ տարածքից դուրս սպասարկվող օնլայն և օֆֆլայն Վաճառքի կետերում,

3.2. Վճարումը պետք է կատարվի Քարտով,
3.3. Ակցիային մասնակցում են ինչպես գործող, այնպես էլ նոր թողարկված Քարտերի Քարտապանները,
3.4. Քարտապանների կողմից Ակցիային մասնակցութունը կատարվում է ավտոմատ՝ առանց լրացուցիչ համաձայնության,
3.5. Փաստացի հաշվարկված Cashback-ը Քարտապանին փոխանցվում է Ակցիայի ավարտից հետո հաջորդող 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում,
3.6. Քեշբեքը հաշվարկվում է Քարտապանի կողմից Ակցիայի ընթացքում նշված Վաճառքի կետերում **կատարված և հաշվանցված** բոլոր գործարքների հանրագումարից,
3.7. Cashback տրամադրվելու է այն Քարտերով կատարված գործարքների մասով, որոնք Cashback տրամադրելու պահին փակված չեն և ունեն գործող կարգավիճակ,
3.8. Քարտի գործողության ավարտի դեպքում, եթե Քարտը չի վերաթողարկվում, Cashback չի տրամադրվում,
3.9. Cashback տրամադրվում է հաշվանցված գործարքների դեպքում,
3.10. **Refund, reversal, Chargeback** կատարված գործարքների դեպքում Cashback չի տրամադրվում,
3.12. Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: